ՄԱՀՏԻ ԵՒ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆՈՐ ԽՌԻՒՐՆ

Մինչդեռ 1882ին վերջերը՝ Արապի Պէյի հանած յուզմանց և արկածից ղոհ եղող Եգիպտոս՝ ձեռք զարկեր էր դարման տանելու իւր մեծամեծ աւերմանց և վնասուց, ահա սուտ մարգարէ մը վերին Եգիպտոսի խորերէն իւր ձայնը բարձրացընելով հասարակաց 'ի սկզբան հեռաքրքիր՝ բայց յետոյ լուրջ հայեցուածը և մտադրութիւնը իրեն ձգեց։ Մահտի՝ Սուտանը ամբողջ ոտք հաներ էր քիչ ատենի մէջ, կազմեր էր բանակ մը ապստամբելոց, և հասեր էր 'ի Դուրահ-էլ-Գասրահ, քսան օրուան ճամբայ հեռի 'ի Գահիրէէ։ — Խեդիվի վարչութիւնն իսկոյն մտածեց ուղարկել այս նոր ապստամբին դէմ զնամայիլ Էյուպ փաշան, Ստոն փաշայի հետ։ Եգիպտոսի մէջ գտնուող անգլիական բանակն, որ մեծաւ մասամբ վերադարձեր էր Յունգլիա, ստիպեցաւ առ ժամն դեռ ևս յապաղելու՝ երկրին խաղաղութիւնը ապահովելու համար։ Ուռանց որոշղական գործոյ մը՝ այս վիճա՛իս մէջ կեցաւ Եգիպտոս քանի մ՚ամիս, մինչդեռ Մահտիի խնդրոյն արժէքն ներքսապէս կը ծանրանար՝ սպառնալից երևոյթի մ՚առնելով։ Եւ յիրաւի շատ չանցաւ՝ երբ գուժեցին յԵւրոպա հեռագիրք՝ Մահտիի մեծ զօրութեան համբաւը և իրեն սկըսած ալեռալից թաւորերգութիւնը։ Անցեալ տարւոյն 1883ի սկիզբները, փետրուարի մէջ, Մահտիի դէմ՝ ուղարկուած էր անդլիացի Հիքս փաշան՝ 10000 եգիպտական կանոնաւոր զօրաց բանակի մը գլուխ դրուած. և ահա նոյն տարւոյն վերջերը կը հանէր յԵւրոպա Հիքսի կրած կոտորածն 'ի Մահտիէ, որ ըստ ոմանց 300,000 և ըստ այլոց միայն 20,000 բանակի մը գլուխն անցեր էր, որ կազմեալ էր մեծաւ մասամբ կրօնամոլ և պատերազմող Պեռուինաց բազմաթիւ ցեղերէ, որոց կ՚առաջնորդէին տէրվիշք։ Երեք օր ևեց այն արիւնահեղ պատերազմն, սկսեալ նոյեմբերի 3էն մինչև 5, Էլ-Օպէյիտի կողմերն, փէքքէտ ըսուած Նեղ անցից մէջ, ուր մահնիչ առաջնորդ մը ձգեր էր Հիքսի բանակը, և ինքն աներևութացեր։ Բովանդակ անգլ-եգիպտական բանակն Ջնջուեցաւ, նոյն ինքն զօրավարն Հիքս և իւր սպայակցին կոտորեցան. հազիւ քանի չափ անձինք կրցան փախչիլ ազատիլ։ Հիքսի սպայակցին կազմեալ էր 12 եւրոպացի գընդապետներէ, յորոց երկուքն գերմանացի էին և մնացած տասն անգլիացի։ Հեծելազնդին կ՚առաջնորդէր Մարդինի զօրապետն, և հետևակազօրուն՝ զօրավարն Վալքէր։ Բանակին կ՚ընկերէին երեք օրգրաց լրաբերք, հռչակաւորն Օ՚Ֆոնվան Եդմոնտ, որ նաև վերջին Ռուս-Օսմանեան պատերազմին ատեն ներկայ գտնուեցաւ Փոքրուն Ասիոյ և Հայաստանի պատերազմին, Վիծեդելլի իտալացին, ուրիշ գերմանացի թղթագիր մը, յորոց իտալացին միայն ազատեցաւ։ Ջայն ելաւ նաև որ Մահտիի դունդն կազմակերպեալ էր Սուլեէ անուամբ գալլիացիէ մը։

Բայց Անդլիացւոց գժբախտութիւնն միայն այսու պիտի չվերջանար։ Երկրորդ օրը 500 եգիպտացիք՝ Մանգրիէվ զօրավարին առաջնորդութեամբ, որ անգլիական հիւսպատ էր 'ի Սուաքիմ, հանդիպեցան Ֆոկրայի մէջ ուրիշ Պեռուինաց բազմաթիւ խմբի մը։ Ջանային փախչիլ, բայց ամէնքն ալ սպանուեցան, բաց 'ի 14 հոգէ, որոնք գոյժ հասուցին 'ի Սուաքիմ։

Ուրիշ նոր աղէտք մ՚ալ հասաւ եգիպտական բանակին, որուն իւրաքանչիւր պատերազմն՝ մի մի կոտորած կը դառնար։ Դեկտեմբերի 5ին 700 ան-

digitised by A.R.A.R.@

ՀԻՆՔԷ կազմուած գունդ մը պատահեցաւ Մահտիի կողմնակցաց Սուաքիմի մօտ. և 700 անձէն միայն 70 կրցան ազատիլ։ Պատերազմին գրեթէ ամբողջ օր մը տևեց՝ գիւղացիական քաջութեամբ կռուելով 700 անձինքն՝ ընդդէմ 5000ի. և այն ատեն միայն սկսան յաղթուիլ՝ երբ հրացանաց փամբուշտներն սպառեցան։

Այս կոտորածներէն յետոյ այլ ևս կորսուած էր Սուտան՝ Եգիպտոսի համար, կարելի չէր այլ ևս ոչ Գորտովանի և ոչ մանաւանդ Ցարֆուրի վրայ մտածել. պէտք էր պաշտպանել ընդարթումի և Սուաքիմ, որուն վրայ կ'ուղղէր Մահտի իւր արշաւանքը։

Այս հարուածն ծանր էր և շատ վընասակար Անգլիոյ Եգիպտոսի վրայ ունեցած ազդեցութեան. ուստի բանակն՝ որ մեծաւ մասամբ սկսեր էր մեկնիլ յԵգիպտոսէ՝ հակառակ հրաման ընդունեցաւ։ Կլոստոնը շատ փութացեր էր Եգիպտական պատերազմին աւարտումը աւետելու՝ Խորհրդոյ ատենին մէջ, և Անգլիացիք կը յանդիմանէին զինքը՝ որ Եգիպտոսի մէջ ուրիշ բան չէր գործած՝ բայց միայն թղթէ բերդ մ'էր կառուցեր։

Վեհափառ Սուլդանն վճռեց մեկէն բանակ մ'ուղարկելու յԵգիպտոս, ոչ միայն Եւրոպացւոց յայտնի ընելու համար իւր ունեցած անբեռնաբարելի իրաւունքը Եգիպտոսի վրայ, այլ նաև ընդդէմ՝ նոր մարդարէին՝ որ կարծես յափշտակել կը ջանար իւր խալիֆութեան իրաւունքը։

Բայց տարբոյս սկիզբն՝ Եգիպտոսի թատերական տեսարանին վրայ հանեց նոր անձի մը դերասանական մասը։ Մինչդեռ Եգիպտոս Մահտիի առջև ծանր վտանգի մէջ կը գտնուէր, ուրիշ վտանգ մ'ալ աւելցաւ Եթովպիոյ Յովհաննէս թագաւորին միջամտութեամբ։ Այս թագաւորն՝ որ 'ի սկզբան քրիստոնէական սկզբունքներու վրայ հաստատուած նամակով մը մերժած էր իսլամական նոր Մարգարէին հետ դաշնադրութիւն կազմելու, յետոյ իր գնդոցն եկաւ տիրեց Եգիպտոսի՝ Եթովպիոյ սահմանակից գաւառաց, օգուտ քաղելով Մահտիի արշաւանքէն. որով Եգիպտական գունդերն փախչելով Մահտիի կողմնակիցներէն, կը պաշարուին Եթովպական բանակէն, որ հասեր է մինչև 'ի Քասալա. և մինչդեռ մեկ կողմէն Յովհաննէս թագաւորն իւր բանակով կը յառաջէր դէպ 'ի ներս, տիրելով Եգիպտական բանակէն լքեալ ամրութեանց, միւս կողմանէ Մահտի գրեթէ զՔարթում առնելու վրայ էր, և կը հրատարակէր որ իր ընծացքը պիտի ուղղէր դէպ 'ի Գահիրէ, աղատելու զայն Անգլիացւոց ձեռքէն։

Եգիպտոսի վարչութիւնն չուտով իմացաւ՝ որ ինքն իրեն մնացած՝ չէր կարող գործ մը տեսնել. ուստի յայտնեց Անգլիոյ՝ որ եթէ վերջինս պաշտպանելու չլինի զԽէտիվին՝ Խորհրդարանն որոշած է Սուտանի պաշտպանութիւնը Յաճկասատանի յանձնելու։ Անգլիա առաջարկեց Եգիպտական խորհրդարանին՝ թողլու զՍուտան, ետ քաշուելու 'ի Քարթումէ, և կեդրոնացրնելու Եգիպտական զօրութիւնները Նիլոսի երկրորդ ջրվէժին մօտ. և թէ այն ատեն միայն կարող է սանձել զՄահտի և կոտորածով մը վրէժ խնդրել Հիքսի մահուան և բանակին կոտրտեան, երբ Պաքէր Եգիպտացի զօրավարն կարենայ միացընել Սուտանի և Նուպիոյ մէջ ցրուած զինուորական ամրութիւնները և բանակները։ Այս առաջարկութեան վրայ՝ իրենց հրաժարականը ներկայացուցին Եգիպտական խորհրդարանին անդամք, և հրաժարականնին ընդունուեցաւ։

Պաշտօնակալաց հրաժարմանէն ետքը նաև փոխարքային վիճակն անհաստատութեան մէջ մնաց. ինքն չէր ուզեր հրաժարիլ և կը ջանար գէթ առժամանակեայ ամրութիւն մը գտնել՝ Նուպար փաշայի նախագահութեամբ կազմեալ խորհրդարանի մը պաշտպանութեամբ. բայց և այն 'ի զուր եղելով կը պահանջէր օգնութիւն

digitised by A.R.A.R.@

կամ 'ի վեհափառ Սուլդանէն, որ է օրինաւոր տէր Եգիպտոսի, և կամ յԱնգլիոյ՝ որոյ ոչ ինչ նուազ ազդեցութեան ներքև կը գտնուէր։

Մինչդեռ Եգիպտոսի վարչութիւնն այս օրինակ երկպառակութեանց և յուսոյ մէջ կը յապաղէր, միւս կողմէն Մահտի և Յովհաննէս Թագաւորն աւելի ևս ահաւոր կը սպառնային։ Կապոյտ Նիլոսի բնակիչքն անցան սուտ մարգարէին կողմն, և 50000 ապստամբեալք Սպիտակ Նիլոսի վրայ պաշարեցին զՀալիֆէէ. Մահտիի առաքեալներն ապստամբութիւն կը գրգռէին վերին Եգիպտոսի մէջ. և շատ մը նահանգներ ընդունեցան նորա իշխանութիւնը։ Եգիպտական վարչութիւնն սահմանեց թողլու զՔարթում, և եթէ հնար է պաշտպանելու զՍուաքիմ՝ Եթովպացւոց թագաւորին դէմ։ Պաքէր փաշա ետ քաշուեցաւ 'ի Թոգարէ և 'ի Սինկատէ. բայց Սուտանէ ետ քաշուիլն դիւրին բան չէր, վասն զի երեք ամիս դէթ պէտք էր և 1300 նաւակներ՝ կարենալու համար ազատել 12000ի եգիպտական բանակը և 84 թնդանօթից ծանրաբեռն կազմածը։

Այսպիսի դժուարին դրութեան մէջ կը գտնուէր Եգիպտոս, երբ վերջապէս Անգլիա տարտամութիւնը մէկդի դնելով՝ հակառակ հրաման ուղարկեց Միացեալ զօրաց՝ չմեկնելու յԵգիպտոսէ. հրամայեց Խէտիվի վարչութեան թողլու զՍուտան, և ինքն հոն ուղարկեց զզօրավարն Կորդոն, գրեթէ լիազօր իշխանութեամբ՝ պէտք եղած դարմանը կատարելու։ Կորդոն՝ նախ Եգիպտոսի վարչութենէն՝ նոյն գաւառաց հրամանատար կարգուեցաւ, և հետը առած Ցարֆուրի դահլիկէց Սուլդանը՝ ուղեց վերտին զայն իրեն գահուն վերայ բարձրացընել։ Պիտի կարենար արդեօք Կորդոն իւր այս դժուարին պաշտաման մէջ յաջողիլ, կը հարցընէին 'ի սկզբան օրագիրք անվստահութեան նախազգացմամբ։ Եւ յիրաւի սկզբնաւորութիւնն յաջող եղք մը չէր գուշակեր։ Ապստամբք յարձակեցան կատաղաբար երկու շաբթնաւուց վրայ, զորս ուղարկած էր Կորդոն աւերելու Նաւակամուրջ մը՝ զոր կառուցեր էին Նոքա Նիլոսի վրայ. և հազիւ այն երկու նաւերն կարող եղան ազատիլ անոնց ձեռքէն, յետ ուժգուն թնդանօթի հարուածոց։ — Կորդոն ինքն անձամբ՝ յետ թողլու զՍուտան և պատգամաւոր մ'ուղարկելու առ Մահտի, սկսաւ քարթումի վրայ քալել. բայց օրէ օր իր առաքելութեան յաջող ելից վրայ օրագրաց տարակոյսներն կը շատնային. մինչև ձայն ելաւ նաև թէ իւր ուղեկցաց հետ 'ի միասին գերի բռնուած լինի. բայց ոչ էր ստոյգ. վասն զի ինքն փորոքոյ անապատէն անցնելով՝ քիչ ատենէն հասեր էր 'ի Պէրպէր։ Բայց իրեն այս խաղաղ ուղևորութեան ժամանակ՝ Սուտանի միւս կողմն ահաւոր կոտորած մը տեղի կ'ունենար։ Թոգարի քով, փետրուարի 4ին, Պաքէր փաշա յետս կը մղուէր յՕսման Տիկմայէ, որ Մահտիի ամենէն աւելի մոլեռանդն և յանդուգն զօրավարներէն մին է։ Եգիպտացւոց թիւն 6000ի կը հասնէր՝ ընդդէմ 10000 թշնամեաց, որոց եռանդուն կատաղութեան առջև՝ տեղի տալ սկսաւ Եգիպտական գունդն, և կամ խոնարհած 'ի գետին՝ սկսան խնդրել խնայելու իրենց կենաց։ Պաքէր 2000 մարդ կորսընցուց, մի մասն ցրուեցան, և հազիւ կրցաւ 1200 զօրքով 'ի Սուաքիմ ապաւինիլ։ Բայց նաև Սուաքիմի մէջ ապահով չէր անգլ-եգիպտական բանակն, վասն զի սուերն ապստամբեցան, և օրէ օր վախ կար Եւրոպացւոց մեծ կոտորած մը հասցընելու. և գաղթականութիւնք սկսան 'ի Սուաքիմէ։ Յովհաննիսեանք ուրիշ կողմէ կ'ըսպառնային Սանքայիի վրայ, որ Եթովպիոյ սահմանագլուխները կը գընի. և ապստամբութիւնն տարածուեր էր 'ի Քասալայէ մինչև ցիարմիր ծով, մանաւանդ թէ նաև ծովէն անդին Արաբիոյ մէկ մասին մէջ ևս գրգռուած էին ոգիք։ Այս դիրքին մէջ էր Եգիպտական խնդիրն՝ երբ վերջա-

digitised by A.R.A.R.@

պէս՝ Կորդոն հասաւ 'ի Քարթում, և յայտնի ըրաւ իր առաքելութեան նը-պատակը, հրովարտակաւ մը՝ յորում կը ճանչնար զՄահտի՝ իբրև օրինաւոր Սուլթան Կորդովանի, որով Սուլտան Եգիպտոսի համար կորսուած պետի համարուէր։ Բայց այս առաջարկն մեր-ժուեցաւ յապտամբաց, որք մարտի սկիզբները տիրեցին նաև Թոգարի, զոր պաշարած էին միայն 1000ի չափ ապստամբք առաջնորդեալ յՕսման Տիկմայէ. և այս յաղթութիւնն յայտ-նի ըրաւ եգիպտական զօրաց վախը և իրենց զինուց և զօրութեան վրայ ու-նեցած անվստահութիւնը։

Այսքան ձախողութեանց փոխարէն՝ անգլիական զինուց յաջողութիւն մը ոչ սակաւ մխիթարեց զՍահտի։ Կրահամ զօրապետն, զոր Անգլիա 4000 զօրք Սուաքիմ եղողաց օգնութեան ուղարկած էր, փետրուարի 29ին դէ-պի քով նշանաւոր յաղթութիւն մը տարաւ, ընդդէմ զօրաց Օսման Տիկ-մայի, որոյ բանակն 10000ի կը հաս-ներ, իսկ Անգլիացւոցն 3000 հետևակ ունէր, 750 հեծեալ, 6 միթրալիէզ և ութ սովորական թնդանօթ։ Երեք ժամ անընդհատ տևեց պատերազմն, որուն մէջ Պետուիններն իրենք զիրենք քա-ջութեամբ պաշտպանեցին. նախ ցը-ցայարդար պատնէշի մը ետև ամրա-ցան, ուստի յարձակեցան անգլիական քառակուսւոյն վրայ. բայց վերջիններս անտեղիտալի մնացին, և յառաջ դի-մելով առին ցցապատնէշը, և ուղղե-լով զթնդանօթս թշնամեաց վրայ՝ դի-րենք 'ի փախուստ ստիպեցին։ Պետու-իններն կորուսին 1100 անձինք, իսկ Անգլիացիք ընդ մեռեալ և ընդ վիրաւ-որ՝ 170 անձինք միայն։ Կրահամ հա-լածեց զթշնամիս՝ բաւական տեղ ե-տևնէն դիմելով, և առաւ անոնց վրա-նայարկ բանակատեղին։ Յետոյ արա-գութեամբ դիմեց Թոգարի վրայ, որ անձնատուր եղաւ մարտի մէկին՝ ա-ռանց ընդդիմութեան. իսկ Օսման Տիկմա գնաց բանակեցաւ ութ մղոն հեռի 'ի Սուաքիմէ։ Բայց Կրահամի այս յաղթութիւնն որոշղական վերջ կա-ցող չէր տալ պատերազմին, և Սու-տանի մէջ որչափ որ դիւրաւ կը ցը-ցուին թշնամիք, այնքան դիւրութեամբ նաև կը ժողովին։ Երկրորդ անգամ յաղթուեցան Պետուինք 'ի Դամանիէ. բայց և ոչ այնու մեծ փոփոխութիւն կրեց պատերազմին տեսարանն. Քան Տիկմա դեռ ևս 70000 զօրաց գը-լուխ անցած կը պատրաստուէր ահեղ կոտորածի մը ընդդէմ Կրահամի. և միւս կողմանէ Կորդոն մեծ վտանգի մէջ էր 'ի Քարթում՝ պաշարուած Մահտիի բանակէն. փորձեց անգամ մը ազատելու, սակայն 'ի զուր. բաւ-կան կորուստ ընելով՝ ստիպեցաւ դար-ձեալ քաշուելու 'ի Քարթում։

Երկին և երկին անգամ ծանոյց Կոր-դոն իւր անթախտ վիճակը Անգլիոյ խորհրդարանին և եգիպտական վար-չութեան. բայց վերջինս անկարող էր օգնելու իրեն, իսկ կլատսդրն խոր-հուրդ կու տար Կորդոնի՝ հաշտելու և միաբանելու ընդ Յովհաննէս թագաւո-րին և նորա նիզակակցութիւնը խրն-դրելու ընդդէմ Մահտիի, և կամ ու-րիշ որ և իցէ կերպով իւր ճարը մտա-ծելու։ Այս կերպով մէկ կողմանէ կ'ի-մացընէր Կորդոնի չյուսալու այլ ևս Անգլիոյ ձեռնտուութեան, և ապաւի-նելու իւր սեփական հնարագիտու-թեան. և միւս կողմանէ կ'առաջարկէր եւրոպական պետութեանց Համազգի ժողով մը գումարել՝ Եգիպտոսի դրա-մական վարչութիւնը կարգադրելու համար։ Այս առաջարկն ցուցաւ ընդու-նելութիւն գտաւ պետութեանց խոր-հրդարանաց մէջ. և առաջարկուեցաւ՝ որ ոչ լոկ դրամական մասին, այլ բո-վանդակ եգիպտական խնդրոյն վրայ որոշողութիւն 'ի գործ դրուէր նոյն ժո-ղովէն։ Բայց Անգլիոյ մէջ ընդհանուր տժգոհութիւն մը կը տարածուէր ընդ-դէմ կլատսդրնի բռնած անտարբեր ընթացից, և անգլիական անուան նա-խախնքը կը նշմարէին Կորդոնի անկ-ման մէջ. մինչև ինքնին կլատսդրն ըս-տիպուեցաւ խօսք տալու՝ օգնութիւն

digitised by A.R.A.R.@

ուղարկելու Կորդոնի յուլիսի վերջերը, երբ Սպիտակ Նիլոսի ջուրերն սկսին քաշուիլ։ Բայց Եգիպտոսի մէջ Անգլիոյ բանակին գործերն օրէ օր 'ի վատթարն կը փուիթային։ Սուաքիմի զինուորական քաղաքապետն՝ զոր Կրահամ թողեր էր իրեն փոխանորդ, ստիպեցաւ թողլու գաղաքն՝ որոյ վրայ կը սպառնար Օսման Տիկմա. նոյն ինքն Կրահամ՝ բարեբախտ դրից մէջ չէր։

Հուետ ծովակալն՝ որ գնացեր էր Եթիոպիոյ կողմերն բանակցելու ընդ Յովհաննէս թագաւորին, թէպէտ և սիրալիր ընդունելութիւն գտաւ 'ի թագաւորէն, սակայն Եթիոպացւոց ընդդէմ Եգիպտացւոց ունեցած առելութիւնը չկրնար բացաւ վերցրնել։ Եւ ահա այս միջոցիս, յունիսի մէջ, կը հասնէր յեւրոպա Պէրպէրի առման լուրն յաղթութեամբ, որոց թիւն 45000ի կը հասնէր. ընդդիմակալ պաշարեալներն 1500 անձինք խողխողեցան, և բովանդակ զինական կազմածքն թշնամւոյն ձեռքն անցան։ Մահտի իւր այս յաղթութենէն վերջը քալեց Ցոնկոլայի վերայ, որ միօրեայ ճանապարհաւ միայն հեռի է 'ի Գահիրէէ։ Սուաքիմ՝ պաշարեալ օրէ օր անկանելու վտանգի մէջ կը տաղնապի. իսկ Կորդոնի վրայոք մինչև ցայժմ անհաստատ և դէմընդդէմ լուրեր միայն կը լսուին։

Կլատսդոն Եգիպտոսի խնդրոյն նկատմամբ Գալլիոյ հետ գաղտնի դաշնադրութիւն մը հաստատելէն վերջը՝ հրատարակեց բովանդակ պետութեանց 'ի 23 յունիսի, հրաւիրելով զիրենք 'ի Լոնտրա 'ի Համագի ժողովն։ Այս դաշնադրութիւնն կազմեալ է հետեւեալ յօդուածներով. նախ՝ Անգլիա յանձն կ'առնու յետոյ կոչելու իր բանակը յեգիպտոսէ 'ի սկիզբն 1888 ամին, այնու պայմանաւ՝ որ եւրոպական պետութիւնք Անգլիոյ զեղիպտոս թողելը վտանգաւոր չհամարին, և նորա ներկայ գտնուիլը՝ խաղաղութեան անհրաժեշտ միջոց. երկրորդ՝ Անգլիա պարտաւորութիւն յանձն կ'առնու բանակը վերադարձնելու ժամանակ և կամ նաև անկէ առաջ՝ ներկայացնելու պետութեանց առաջարկ մը՝ զեղիպտոս և Սուէզի անցքը չէզոք գրից մէջ պահելու համար։ Իսկ դրամական խնդիրն թողուած է դումարելիք ժողովին որոշման, որ տեղի ունեցաւ 'ի Լոնտրա 'ի 28 յունիսի, յորում ժողովեալ են եւրեսփոխանք Անգլիոյ, Գալլիոյ, Գերմանիոյ, Իտալիոյ, Ռուսիոյ, Աւստրիոյ և Ցաճկաստանի։

Իսկ Եգիպտոսէ հասած նշանաւոր լուրն ամենայն վերջերն՝ եղաւ Ցոնկոլայի առումն 'ի Մահտիէ, բայց դեռ ստուգութեան կարօտութիւն ունի։

digitised by A.R.A.R.@